



# ԱՐՄԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հատված

2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Գլուխ 1. Ռիսկի վերլուծություն.....	5
Գլուխ 2. Վանդալիզմ.....	8
Գլուխ 3. Գողություն.....	11
Գլուխ 4. Հրդեհ.....	15
Գլուխ 5. Ջրհեղեղներ .....	20
Գլուխ 6. Քիմիական նյութերի արտահոսք.....	26
Գլուխ 7. Երկրաշարժ.....	30
Գլուխ 8. Ահաբերկչություն .....	35
Գլուխ 9. Թանգարանները պայթյունի, ռմբակոծություն և պատերազմի սպառնալիքի ներքո .....	42
Գլուխ 10. Շինարարական օբյեկտի ռիսկերը.....	47

## Հակիրճ՝ ԻԿՕՄ-ի մասին

1946 թ. ստեղծված ԻԿՕՄ-ը (Թանգարանների միջազգային խորհուրդ) միջազգային ոչ պետական կազմակերպություն է: Այի պաշտոնական կապեր է պահպանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Միացյալ ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի հետ, ունի խորհրդատվական կարգավիճակ: ԻԿՕՄ-ը թանգարաններն ու թանգարանային մասնագետներին ներկայացնող միակ միջազգային կազմակերպությունն է:

ԻԿՕՄ-ը՝

- 137 երկրների և տարածքների ներկայացուցիչներից կազմված **դիվանագիտական ֆորում է:**
- Սահմանում է թանգարանների որակի չափորոշիչներ (ստանդարտ), այդ թվում՝ թանգարանների աշխատակիցների համար վարվելակարգի կանոններ (էթիկայի նորմեր):
- Աշխարհի տարբեր ծայրերում գործող շուրջ 30.000 թանգարանային մասնագետից կազմված **միջազգային ցանց է:**
- ԻԿՕՄ-ի մասնագիտացումները ներկայացնող 31 միջազգային կոմիտեից կազմված **վերլուծական կենտրոն է:**
- Իրականացնում է նաև միջազգային հանրային ծառայությունների առաքելություններ, մասնավորապես՝ **պայքար** ապօրինի շրջանառման դեմ և **օգնության ծրագրեր**՝ բնական աղետների, զինված հակամարտությունների և արտակարգ իրավիճակների դեպքում:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վիլեմ Հեկմա (Նիդերլանդներ)

## ԻԿՄՍ-ը (ICMS –International Committee of Museum Security) համառոտ

1974 թ. ԻԿՕՄ-ին կից ստեղծվեց թանգարանային անվտանգության միջազգային կոմիտեն՝ ԻԿՄՍ -ը, որը համախմբում և ներկայացնում է թանգարանային անվտանգության մասնագետներին:

### ԻԿՄՍ-ի նպատակներն են՝

- Աջակցել ԻԿՕՄ-ի նպատակներին և խնդիրներին, մասնավորապես՝ թանգարանային անվտանգության բնագավառում:
- Մշակել և իրականացնել թանգարանային անվտանգության հետ կապված գործողությունների ծրագիր:
- Թանգարանների, թանգարանային անվտանգության մասնագետների և այդ ոլորտում ներգրավված այլ անձանց միջև ապահովել ֆորում՝ հաղորդակցության, համագործակցության և տեղեկատվության փոխանակաման նպատակով:
- ԻԿՕՄ-ին խորհրդատվություն տրամադրել թանգարանային անվտանգության վերաբերյալ: Իբրև մասնագիտացված փորձագիտական աղբյուր՝ աջակցել ԻԿՕՄ-ի ծրագրի իրականացմանը:
- ԻԿՕՄ-ի շրջանակներում՝ ներկայացնել թանգարանային անվտանգության շահերը:
- Կոմիտեի հատուկ մանդատի և ԻԿՕՄ-ի ավելի լայն շահերին առնչվող հարցերի շրջանակներում՝ համագործակցել ազգային կոմիտեների և անդամակցող կազմակերպությունների հետ:

### Փոփոխությունը

Աշխարհը փոխվում է՝ փոխելով նաև մեր մտածելակերպը. դուր է գալիս այն մեզ, թե՛ ոչ: Աղետաբեր ահաբեկչությունը՝ օրեցօր աճող քրեական հանցագործությունների և բնապահպանական խնդիրների հետ միասին, մեկն է այն խնդիրներից, որոնք ստիպում են անապահով զգալ և զգոն լինել շրջապատող պոտենցիալ վտանգների նկատմամբ:

Այլևս բավարար չէ սովորական դարձած եղանակներով ու միջոցներով պահպանել մեր մշակութային ժառանգությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով պաշտպանության վրա: Կան ավելի շատ ռիսկեր, որոնք վտանգում են այդ ժառանգությունը, քան երբևէ: Մենք հարկադրված ենք մեծացնել անվտանգության միջոցառումները շատ ավելի բարդ եղանակներով, քան՝ կցանկանայինք:

Հետևաբար, արվեստի և արվեստի առարկաների անվտանգության ոլորտի մասնագետների համար անհրաժեշտ է հաղորդակցվել միմյանց հետ և դաս քաղել առկա խնդիրներից: Ըստ այդմ՝ պետք է համոզված լինեք, որ Ձեր անվտանգության կազմակերպությունը Ձեր թանգարանի ընդհանուր կառույցի ներքին և ինտեգրված բաղկացուցիչն է: Սա միայն անվտանգության հարց չէ: Այն առանցքային հարց է ողջ թանգարանի համար և ներառում է անձնակազմը, այցելուներին, հավաքածուները, հավաքածուի առարկաների գրանցումը, ֆինանսական տվյալները և այլն:

## **Ձեռնարկ**

ԻԿՄՄ-ի շրջանակներում, տարբեր ոլորտի մասնագետները շարադրել են կոնկրետ խնդիրներին վերաբերող բաժինները՝ ներածությունից մեկ կամ ավելի օրինակով, որին հետևում են սպառնալիքների ներկայացումը, արտակարգ իրավիճակները կանխելուն և հաղթահարելուն միտված ստուգաթերթերը:

Այս ձեռնարկն, առաջին խմբագրությամբ բաղկացած էր 10 գլխից, սակայն, ամբողջությամբ վերցրած՝ սա գործող փաստաթուղթ է: Այսուհանդերձ, առավելագույնս ողջունվում է յուրաքանչյուր ընթերցողի կամ կիրառողի կողմից լրացումներ, մեկնաբանություններ կամ շտկումներ կատարելն ու ԻԿՄՄ-ին ուղարկելը:

Թեև հեղինակներն ու խմբագիրը փորձել են մասնագիտացված ձեռնարկ պատրաստել, սակայն ո՛չ նրանք, ո՛չ էլ ԻԿՄՄ-ը չեն կարող պատասխանատույան ենթարկվել հավանական սխալների համար:

Այս ձեռնարկը հրատարակվել է ԻԿՄՄ-ի կայեջում՝ թանգարանների անվտանգությամբ և հուսալիությամբ զբաղվող բոլոր մասնագետների կողմից օգտագործվելու համար. այն կարող է օգտակար լինել մեծ և հատկապես՝ փոքր թանգարանների համար:

Թեև ոչ ոք չէր կամենա իր թանգարանում բախվել արտակարգ իրավիճակի հետ, այսուհանդերձ, անսպասելի աղետներ միշտ և ամենուր կարող են պատահել, ուստի՝ պատրաստ եղեք:

# ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Սերգիու Բերչովիչի (Իսրայել)

## Ներածություն

Մշակութային ժառանգության հաստատությունները, ինչպես և ազգային տարաբնույթ խորհրդանիշներն ահաբեկչական գործողությունների հիմնական թիրախներ են համարվում: Նման ահաբեկչական հարձակումը ոչ միայն կարող է վնասել ազգային արժեքներին ու խորհրդանիշներն, այլև այդ վայրերում մեծ թվով մարդկանց կենտրոնացմամբ պայմանավորված՝ կարող է բազմաթիվ զոհերի պատճառ դառնալ:

1997 թ. սեպտեմբերին ինը գերմանացի զբոսաշրջիկ և մեկ եգիպտացի սպանվեցին Կահիրեի թանգարանի հարակից տարածքում: Երկու ամիս անց՝ նոյեմբերին, վեց զինված անձ կրակ բացեցին Լուքսորի տաճար մտնող զբոսաշրջիկների խմբի վրա: Սպանվեց 58 զբոսաշրջիկ ու 6 եգիպտացի: Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո ահաբեկչության ռիսկի պատճառով՝ թանգարանների ապահովագրության սակագինը բարձրացավ 500%-ով:

2009 թ. մայիսի 25-ի երկուշաբթի օրվա վաղ առավոտյան՝ ինքնաշեն պայթուցիկ գործադրվեց Նյու Յորքի 92-րդ փողոցի և 3-րդ պողոտայի Ստարբաքսում: Ոստիկանությունը չկարողացավ բացատրել Ստարբաքսի ահաբեկչական հարձակման պատճառը: Ըստ վարկածի՝ նշանավորված թիրախը մոտակայքում գտնվող Գուգենհայմ թանգարանն էր: Պայթուցիկը դյուրավատ և չպարզված խթանիչ նյութ էր պարունակում, որի հետևանքով կոտորվել էին Ստարբաքսի ցուցափեղկի պատուհանները: Պայթյունից հետո, առավոտյան ժամը 3:30-ին, Ստարբաքսի բնակիչներն անմիջապես տարհանվել էին:

## Սահմանում

Ահաբեկչությունը, կազմակերպված խմբերի կամ անհատի կողմից տարբեր թիրախներին հասնելու նպատակով՝ ուժի և բռնության համակարգված կիրառումն է՝ պատահական, անմեղ քաղաքացիների նկատմամբ: Ահաբեկչական գործողության շարժառիթ կարող են լինել՝

- ազգային կամ էթնիկ հակամարտությունը,
- կրոնական հակամարտությունը,
- քաղաքական շահերը,
- վարչակարգը զավթելու փորձը,
- անարխիստական գործողությունները:

***Տարածված ահաբեկչական տեխնիկաներ***

Մշակութային ժառանգության հաստատությունների նկատմամբ կիրառվող ահաբեկչական տարածված տեխնիկաներն են՝

- թակարդ լարել,
- զինված հարձակում,
- պայթուցիկների տեղադրում,
- կենսաբանական կամ քիմիական զենքերի կիրառում,
- մահապարտի հարձակում (Նյու Յորք, սեպտեմբերի 11, 2001),
- պատանդառություն (Մոսկվայի թատրոն, 2002 թ. հոկտեմբերի 23 և Բեալանի դպրոց, 2004թ. սեպտեմբերի 1, Հյուսիսային Օսեթիա, Ռուսաստան),
- առևանգում,
- սաբոտաժ:

### **Ո՞վ և ինչի՞ համար է պատասխանատու**

Ահաբեկչական գործողությունների դեմ պաշտպանության համատեքստում՝ ողջ պատասխանատվությունն ընկնում է երկրի անվտանգության ուժերի վրա: Մշակութային ժառանգության հաստատությունները պետք է նախապատրաստեն անվտանգության կարգավորումներն իրավական պահանջների համաձայն և ուղղորդվեն դրանց իրականացման համար պատասխանատու անվտանգության ծառայությունների կողմից:

Անվտանգության ծառայությունների պարտքն է ցուցումներ տալ, կառավարել և զսպել ցանկացած ահաբեկչական գործողություն: Մշակութային ժառանգության հաստատությունները պետք է արտակարգ իրավիճակների համար նախապատրաստական գործողությունների պլան մշակեն՝ պասիվ և ակտիվ պահպանության միջոցառումներ ձեռնարկեն և ուղղորդեն անձնակազմին:

Ահաբեկչական գործողության ժամանակ մշակութային ժառանգության հաստատությունները պետք է աջակցեն անվտանգության ծառայություններին՝ տրամադրելով ցանկացած տեղեկություն և առկա տեխնիկական միջոցներ:

### **Անվտանգության պլանի հիմնային բաղադրիչներ**

Անվտանգության պլանի նախապատրաստումը նախևառաջ կարևոր քայլ է հաստատություններն ահաբեկչական գործողությունների դեպքում պատրաստ վիճակի բերելու համար: Այս նախապատրաստությունը էական է յուրաքանչյուր ահաբեկչական գործողության դեպքում, իրական ժամանակում պատկան մարմիններին ճիշտ պատասխաններ տրամադրելու կարողություն տալու համար: Սպառնալիքի գնահատումը նախ պետք է նույնականացվի, և ապա հաշվարկվի պոտենցիալ ռիսկը: Կանխարգելիչ միջոցառումները կարող են կանգնեցնել կամ խանգարել ահաբեկիչներին: Այդ պլանը պետք է լինի պարզ, և անվտանգության թիմը պետք է լինի ուսումնասլարժ՝ նոր ռիսկի հայտնաբերման տեխնիկաների և տեխնոլոգիաների մեջ: Պլանը պետք է լինի դինամիկ: Անվտանգության կառավարիչը (մենեջերը) և թիմը պետք է շարունակաբար փորձարկեն և քննեն անվտանգության պլաններն ու համակարգերը՝ թույլ կողմերը գտնելու նպատակով:

Ծրագրի քայլերը ներառում են՝

- վտանգի նույնականացում և գնահատում,

- կանխարգելիչ գործընթացներ,
- պատասխաններ՝ պոտենցիալ ահաբեկչական սցենարներին,
- թույլ կողմերի համար հետադարձ կապի վերաստուգում:

#### **Կարևոր տարածքի պաշտպանություն**

Անվտանգության պլանում պետք է հաշվի առնվեն թանգարանների այն տարածքները, որոնք ահաբեկչության համատեքստում կարող են վտանգավոր լինել: Դրանցից են՝

- գլխավոր մուտքը,
- շենքի մերձակայքը,
- կայանատեղին,
- ցուցադրության տարածքը,
- ռեստորանը կամ բուֆետը,
- օդափոխության և օդորակման համակարգերը:

#### **Հայտնաբերվող սպառնալիքներ**

Անվտանգության անձնակազմի կողմից սպառնալիքները կարող են հայտնաբերվել հետևյալ տարբերակներով՝

- կասկածելի փոստային առաքում,
- հրագեն կամ այլ զենքեր,
- կասկածելի փոխադրամիջոցներ,
- կասկածելի անձինք,
- կասկածելի նյութեր, որոնք կարող են կենսաբանական/քիմիական վտանգ պարունակել:

#### **Կանխարգելիչ գործողություններ և սարքավորումներ**

Կանխարգելիչ գործողությունների և տեխնոլոգիական սարքավորումների կիրառումը՝

- հնարավոր սցենարների և համապատասխան լուծումների կառուցում.
- հաստատության պասիվ պաշտպանության միջոցառումներ.
  - երեսպատել գոյություն ունեցող պատուհանները 350 միկրոն սինթետիկ (պլաստիկի) թաղանթով կամ ամբողջ պատուհանը փոխել նյութով, որը բեկորներ չի առաջացնում,
  - մարդկանց կամ առարկաների ներխուժումը կանխարգելելու համար ֆիզիկական արգելքներ տեղադրել (օրինակ՝ ցանկապատ, ցանց և այլն),
  - կառույցների և մարդաշատ վայրերի շրջակայքում փոխադրամիջոցների շարժումը կանխող միջոցառումներ ձեռնարկել,
  - տեղադրել արգելքներ, որոնք կանխարգելում են ական-ծուղակով տեղաշարժման միջոցների և պայթուցիկ մեքենաների մուտքն ու ներխուժումը բակ կամ շենքի տակ տեղակայված ներքին կայանատեղիի տարածքներ,
  - տեսանելի և անտեսանելի (ինֆրակարմիր) անվտանգության լույսեր տեղադրել,
  - շենքի և կայանատեղիի շուրջ պահպանական տեսաձայնագրման համակարգ տեղադրել:
- ակտիվ պաշտպանության միջոցառումներ.



- շենքի ներսում և դրսում կասկածելի առարկաների, տեղաշարժման միջոցների կամ անձանց ամենօրյա որոնողական աշխատանքներ,
- հասանելիության վերահսկողություն
- դիտման եղանակով և ժամանակակից տեխնիկական միջոցներով ու սարքերով (մետաղորոշիչներ և այլն) ստուգել տարածք մտնող բոլոր այցելուներին,
- ռենտգենյան սարքերով ստուգել այցելուներին պատկանող բոլոր առարկաները՝ պայուսակները, թիկնապայուսակները և այլն,
- իրականացնել մուտքի և ելքի ցանկացած շարժի հսկողություն և տեսաձայնագրում,
- դիտման եղանակով և տեխնիկական միջոցներով ստուգել բոլոր փոխադրամիջոցները,
- «քնած» պայթուցիկների հնարավոր տեղադրման կամ զինամթերքի և պայթուցիկ նյութերի կուտակման կանխարգելման նպատակով՝ շարունակական հսկողություն իրականացնել կոնստրուկտիվ բարեփոխումների և շինարարության ընթացքում տեղադրվող կասկածելի նյութերի նկատմամբ (հմմտ. չեչենների նախագահի սպանության և Բեսլանի դպրոցի դեպքերը):

### **Ձևման գործընթաց**

- քաղաքացիների զննում.
  - շենքի մուտքի շրջակա տարածքում անվտանգության աշխատակազմի կողմից կասկածելի անձանց նույնականացման ստուգում (արտաքին շրջան),
  - ձեռքի կամ դարպասների մետաղորոշիչների միջոցով տարածք մուտք գործող անձանց ստուգում շենքից դուրս,
  - ստուգված և չստուգված անձանց միջև չեզոք գոտու ստեղծում,
  - անհատական զննում իրականացնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել պտուտադոնակներ՝ զննված անձի և հերթում կանգնածների միջև պատշաճ հեռավորություն ստեղծելու նպատակով,
  - անվտանգության զննման իրականացման վայրի շուրջ կուտակումներից խուսափելու նպատակով՝ խորհուրդ է տրվում այցելուների տեսադաշտում, սակայն որոշակի հեռավորության պահպանմամբ, ևս մի քանի ստուգման կետ ստեղծել:
- տեղաշարժման միջոցների զննում.
  - ցանկացած տեղաշարժման միջոց, որը հնարավոր է համարվում, որ կայանվում է փակ տարածքում կամ շենքի կողքին պետք է անցնի անվտանգության զննում
  - անվտանգության զննումը պետք է կատարվի երկու արգելքների միջև, որոնք ունակ են կանխել տեղաշարժման միջոցների խախտումը
  - արգելքները պետք է նաև տեղադրվեն կայանատեղիի ելքի մոտ
  - ստուգել կասկածելի առարկաները տեղաշարժման միջոցի ներսում և դրսից

### **Նույնականացման գործընթաց**

- կասկածելի անձանց նշաններ.
- ոչ պատշաճ հագուստը,

- ձեռքերի թափահարումը, դեմքին ձեռք տալը, նյարդային վիճակի դրսևորումները
- քրտնած-կարմրած լինելը,
- իմպուլսիվ շարժումները,
- փայլող աչքերը,
- քթի տակ խոսելը,
- արյան երակների երևալը,
- կասկածելի փոստային առաքումների (ծանրոցների) նշանները.
  - արտաքինից նկատվող փոշենման նյութի հետքեր,
  - փոստառաքումը սպասված չէ կամ անձանոթից է,
  - ունի չափազանց շատ նամականիշներ, ձեռքով է գրված կամ հազիվ երևացող հասցեով, սխալ վերնագրեր ունի, անանուն է կամ տառասխալներով է գրված,
  - ուղղված է մեկին, որն արդեն ձեր կազմակերպության աշխատակից չէ, այլ կերպ ասած՝ ժամանակավրեպ է,
  - չունի հետադարձ հասցե կամ անիրական է,
  - չափի համեմատ՝ անսովոր քաշ ունի, շրջված է կամ ոչ բնորոշ տեսք ունի,
  - ժապավեններն անսովոր քանակ ու ձև ունեն,
  - սահմանափակող մակագրություն կամ դրոշմ ունի, ինչպես օրինակ՝ «Առձեռն» կամ «Գաղտնի»,
- տեղաշարժման միջոցների կասկածելի նշանները.
  - մեքենայի նույնականացման համարանիշը,
  - հետախուզական տեղեկությունը,
  - տեղաշարժման միջոցի տեսանելի պարունակությունը,
  - նշանների խախտումը,
  - կասկածելի վարորդը կամ ուղևորները,
  - մեքենայի մեծ բեռնախցիկը:
- կասկածելի առարկայի նշանները.
  - անձանաչելի է տվյալ վայրում,
  - տերն անհայտ է,
  - չափի համեմատ՝ անսովոր քաշը,
  - կասկածելի պարունակությունը,
  - տեսանելի պարունակություն. արկղեր, խողովակներ, մարտկոցներ, մետաղալարեր, բջջային հեռախոսներ,
  - պայուսակից վառելիքի հոտով հեղուկ նյութի դուրս հոսելը:

### **Արձագանքումը գործողություններին**

- հիմնական քայլերը.
  - նույնականացնել սպառնալիքը,
  - տարածքում գտնվողներին տարհանել և տեղեկացնել անվտանգության մարմիններին,

- մեկուսացնել սպառնալիքը,
  - անվտանգության մասնագետների միջոցով կասկածելի այլ անձանց, տեղաշարժման միջոցների, առարկաների նյութերի որոնման իրականացում,
  - անխուսափելի գործողության սպառնալիքը,
  - գործողության ավարտի հանրահեռակումը,
  - վերադարձ առօրյային:
- կասկածելի առարկաներ.
    - զգոնություն այն առարկաների նկատմամբ, որոնք իրենց տեղում չեն, թարմ ներկված վայրեր, անհանգստացնող կեղտոտվածություն, առաստաղի փոխված սալիկներ, վերջերս տեղաշարժված առարկաներ, կոտրված գրասենյակներ և էլեկտական լարեր,
    - չդիպչել ոչնչի,
    - չօգտագործել բջջային հեռախոսներ և ռադիոսարքեր,
    - տարհանել տարածքում գտնվողներին և տեղեկացնել անվտանգության մարմիններին,
    - ուշադիր զննել տարածքը և դռների շրջակայքը,
    - հեռու մնալ պատուհաններից, էլեկտրական սարքերից, ցուցափեղկերից,
    - պատրաստ լինել հնարավոր պայթյունին:
  - կասկածելի տեղաշարժման միջոցներ.
    - չդիպչել ոչնչի,
    - չօգտագործել բջջային հեռախոսներ և ռադիոսարքեր,
    - տարհանել տարածքում գտնվողներին և տեղեկացնել անվտանգության մարմիններին,
    - հեռու մնալ պատուհաններից և հեռահաղորդակցության գծերից,
    - գնալ ամենամոտ ապահով վայրը,
    - պատրաստ լինել հնարավոր պայթյունին:
  - կասկածելի փոստառաքումներ (ծանրոցներ) կամ քիմիական, կենսաբանական նյութեր.
    - ձեռք չտալ փոստառաքմանը կամ քիմիական, կենսաբանական կասկածելի նյութերին,
    - անջատել օդորակման կամ օդափոխման համակարգերը,
    - փակել սենյակի պատուհաններն ու դռները,
    - մեկուսացնել այն անձանց, որոնք շփվել են կասկածելի փոստառաքման կամ նյութերի հետ,
    - որքան հնարավոր է՝ շուտ ցնցուղ ընդունել օձառով ու ջրով,
    - տարհանել տարածքում գտնվողներին և տեղեկացնել անվտանգության մարմիններին:

**Պատանդ վերցնելու իրավիճակում**

- եթե դուք լսում կամ տեսնում եք պատանդ վերցնելու իրավիճակ.
  - անհապաղ հեռացնել բոլոր մարդկանց և ինքներդ Ձեզ որևէ սպառնալիքից,
  - տեղեկացրեք անվտանգության մարմիններին,

- մնացեք հանգիստ և պահպանեք հանդարտություն Ձեր շուրջ,
- մի՛ նախաձեռնեք ոչինչ,
- մի՛ գրգռեք պատանդ վերցնողին,
- համոզեք պատանդ վերցնողին թույլ տալ ցույց տալ բժշկական օգնություն կամ ազատել հիվանդ կամ վնասված պատանդներին,
- խոսեք պատանդ վերցնողի հետ,

-եթե Ձեզ են պատանդ վերցրել.

- պահպանեք հանդարտություն, եղեք քաղաքավարի և համագործակցեք ձեզ պատանդ պահողների հետ,
- մի՛ բողոքեք, խուսափեք թշնամական լինելուց և ենթարկվեք բոլոր հրամաններին,
- մի՛ գրավեք ուշադրությունը դեպի Ձեզ անսպասելի շարժումներով, հայտարարություններով, մեկնաբանություններով և թշնամական հայացքներով,
- մի՛ փորձեք փախչել, եթե չկա փրկվելու լավ հնարավորություն,
- աշխատեք մնալ հատակին մոտ կամ ծածկի տակ, հեռու պատուհաններից և դռներից,

-փրկարարական աշխատանքների դեպքում.

- մի՛ վազեք, պառկեք հատակին և մնացեք անշարժ,
- մի՛ կատարեք կտրուկ շարժումներ,
- սպասե՛ք հրահանգների,
- մի՛ դիմադրեք, եթե նույնիսկ ձեռնաշղթաներով եք և խուզարկված,

### **Որոշումների կայացումը ահաբեկչական գործողության դեպքում**

Երբ անվտանգության աշխատակիցները բախվում են վերը նկարագրված իրավիճակներից մեկին, տվյալ իրավիճակին համապատասխան՝ դժվար որոշումներ պետք է կայացվեն: Օրինակ՝ մեկը կարող է որոշել տարհանել տարածքը: Ի՞նչ այլընտրանք նա կարող է նա ունենալ:

1. Հետաձգեք տարհանման հրահանգը մինչև պետության անվտանգության հատուկ ծառայության ժամանումը դեպքի վայր, որպեսզի նրանք կարողանան ուսումնասիրել իրավիճակը և արձագանքել:
2. Մեկը կարող է հայտարարել անհապաղ տարհանում՝ ուղղորդելով մարդկանց անվտանգ վայր, մինչև պետության անվտանգության աշխատակիցները հաստատեն առօրյային վերադառնալը: Այս գործողությունն ամենաապահովն է կյանքեր փրկելու տեսանկյունից:
3. Հրահանգեք տարհանվել և միաժամանակ սկսեք իրականացնել որոնողական աշխատանքներ՝ աշխատելով պատրաստված և փորձառու թիմի հետ: Այս տարբերակը օգտագործելով կարելի է արժեքավոր ժամանակ շահել բուն

սպառնալիքին դիմակայելու համար, այդպիսով գույքը նույնպես կփրկվի:  
Անբարենպաստ պայմանները վտանգի տակ են դնում անվտանգության թիմին:

Որոշումներ կայացնելու գործընթացը պետք է լինի արձագանքման համակարգի անբաժանելի մասը, այն պետք է հաստատվի ինչպես հաստատության կառավարման բաժնի, այնպես էլ պետական անվտանգության հաստատությունների կողմից: Այս արված հաստատումների միջոցով, տեղում որոշում կայացնող անձը ազատվում է ծանր ճնշումից, որը բխում է իրական ժամանակում որոշումներ կայացնելու մեծ պատասխանատվությունից:

## **Ստուգաթերթ**

-ընդհանուր.

- ունեք արդյո՞ք ուստիկանության կամ անվտանգության այլ մարմինների հեռախոսահամարները՝ հրապարակված կամ ձեռքի տակ,
- ունեք արդյո՞ք ահաբեկչական գործողության դեպքի համար մշակված պլան,
- ունեք արդյո՞ք առաջին օգնության համար դեղարկղիկ,
- ունեք արդյո՞ք ահաբեկչական գործողության վերաբերյալ նախազգուշացման մասին տեղեկատվություն անվտանգության մարմիններից կողմից,
- ունեք արդյո՞ք ցուցումներ ահաբեկչական սպառնալիքի իրավիճակի համար,

-արտաքին տարածք.

- արդյո՞ք բակի տարածքն ամբողջովին ցանկապատված է,
- արդյո՞ք ցանկապատը տեղադրված է պատշաճ կերպով և լավ վիճակում է,
- ունեք արդյո՞ք պատշաճ ֆիզիկական արգելքներ և դարպասներ,
- արդյո՞ք բակի տարածքը և շինությունները պատշաճ կերպով են լուսավորվում գիշերը,
- ունեք արդյո՞ք շինությունների հարակից տարածքում տեսավերահսկման համակարգ,
- ունեք արդյո՞ք արտաքին ներխուժման հայտնաբերման համակարգ,

-ներքին տարածք.

- ունեք արդյո՞ք մի քանի ստուգման կետեր և մեկից ավելի մուտք և տոմսարկղեր այցելուների համար,
- արդյո՞ք դուք տեղաբաշխել եք ստուգման կետերը, մուտքերը և տոմսարկղերը ողջ տարածքով, այլ ոչ կենտրոնացրել մեկ տեղում,
- ունեք արդյո՞ք մետաղորոշիչ դարպաս,
- ունեք արդյո՞ք ռենտգեն սարքավորում,
- արդյո՞ք ունեք ամենօրյա զննում արտաքին և ներքին տարածքներում կասկածելի առարկաների, մեքենաների և այլնի հայտնաբերելու նպատակով,
- արդյո՞ք պատուհանները երեսպատված են 350 միկրոն պլաստիկ թաղանթով:

## **Պատանդ վերցնելու իրավիճակում**

1. Եթե լսում կամ տեսնում եք պատանդ վերցնելու իրավիճակ.

- անհապաղ հեռացեք և հեռացրեք բոլորին՝ սպառնալիքից խուսափելու համար,
- տեղեկացրեք անվտանգության մարմիններին,
- հանգիստ մնացեք և շրջապատում հանգստություն պահպանեք,
- մի՛ միջամտեք իրավիճակին,
- մի՛ գրգռեք պատանդ վերցնողին,
- պատանդ վերցնողին համոզեք թույլատրել բժշկական օգնություն ցուցաբերելու կամ ազատելու հիվանդ կամ վնասված պատանդներին,
- խոսեք պատանդ վերցնողի հետ:

2. Թե Ձեզ են պատանդ վերցրել.

- պահպանեք հանգստությունը, եղեք քաղաքավարի և համագործակցեք ձեզ պատանդ պահողների հետ,
- մի՛ բողոքեք, խուսափեք թշնամական լինելուց և ենթարկվեք բոլոր հրամաններին,
- անսպասելի շարժումներով, հայտարարություններով, մեկնաբանություններով և թշնամական հայացքներով ուշադրություն մի՛ գրավեք,
- մի՛ փորձեք փախչել, եթե փրկվելու լավ հնարավորություն չկա,
- աշխատեք մնալ հատակին մոտ կամ ծածկի տակ, հեռու պատուհաններից և դռներից:

3. փրկարարական աշխատանքների դեպքում.

- մի՛ վազեք, այլ պառկեք հատակին և անշարժ մնացեք,
- մի՛ կատարեք կտրուկ շարժումներ,
- սպասե՛ք հրահանգների,
- մի՛ դիմադրեք, եթե նույնիսկ ձեռնաշղթաներով եք և խուզարկված,

### ***Ահաբեկչական գործողության դեպքում որոշումներ կայացնելը***

Երբ անվտանգության աշխատակիցները բախվում են վերը նկարագրված իրավիճակներին, ապա, իրավիճակին համապատասխան՝ դժվար որոշումներ պետք է կայացվեն:

Օրինակ՝ ներկաներից մեկը կարող է որոշել տարհանել տարածքը: Ի՞նչ այլընտրանք նա կարող է ունենալ:

1. Հետաձգեք տարհանման հրահանգը մինչև պետության անվտանգության հատուկ ծառայության ժամանումը դեպքի վայր, որպեսզի նրանք կարողանան ուսումնասիրել իրավիճակն ու արձագանքել:
2. Մեկը կարող է հայտարարել անհապաղ տարհանում՝ մարդկանց ուղղորդելով դեպի անվտանգ վայր, մինչև պետության անվտանգության աշխատակիցները

հաստատեն, որ վտանգն անցել է և կարելի է վերադառնալ առօրյային: Այս գործողությունն ամենաապահովն է՝ կյանքեր փրկելու տեսանկյունից:

3. Հրահանգեք տարհանվել և միաժամանակ սկսեք որոնողական աշխատանքներ իրականացնել՝ համագործակցելով արհեստավարժ և փորձառու թիմի հետ: Այս տարբերակն օգտագործելով՝ կարելի է արժեքավոր ժամանակ շահել բուն սպառնալիքին դիմակայելու համար, այդպիսով գույքը նույնպես կփրկվի: Անբարենպաստ պայմանները վտանգի տակ են դնում անվտանգության թիմին:

Որոշումներ կայացնելու գործընթացը պետք է լինի արձագանքման համակարգի անբաժանելի մասը, այն պետք է հաստատվի ինչպես հաստատության կառավարման բաժնի, այնպես էլ պետական անվտանգության մարմինների կողմից: Այս հաստատումների միջոցով՝ տեղում որոշում կայացնող անձն ազատվում է ծանր ճնշումից, որը բխում է իրական ժամանակում որոշումներ կայացնելու մեծ պատասխանատվությունից:

### ***Ստուգաթերթ***

1. Ընդհանուր դրույթներ.

- ունե՞ք ոստիկանության կամ անվտանգության այլ մարմինների հեռախոսահամարները՝ հրապարակված կամ ձեռքի տակ,
- ունե՞ք ահաբեկչական գործողության դեպքի համար մշակված պլան,
- ունե՞ք առաջին օգնության համար դեղարկղիկ,
- ունե՞ք անվտանգության մարմինների կողմից ահաբեկչական գործողության վերաբերյալ նախազգուշացման տեղեկատվություն,
- ունե՞ք ցուցումներ ահաբեկչական սպառնալիքի իրավիճակի համար:

2. արտաքին տարածք.

- արդյոք բակի տարածքն ամբողջովին ցանկապատվա՞ծ է,
- արդյոք ցանկապատը պատշաճ կերպով տեղադրվա՞ծ է և լա՞վ վիճակում է,
- ունե՞ք պատշաճ ֆիզիկական արգելքներ և դարպասներ,
- բակի տարածքը և շինությունները գիշերը պատշաճ կերպով են լուսավորվում,
- ունե՞ք շինությունների հարակից տարածքում տեսավերահսկման համակարգ,
- ունե՞ք արտաքին ներխուժման հայտնաբերման համակարգ:

3. ներքին տարածք.

- այցելուների համար ունե՞ք մեկից ավելի ստուգման կետ, մուտք և տոմսարկղեր,
- արդյոք տեղաբաշխե՞լ եք ստուգման կետերը, մուտքերը և տոմսարկղերը ողջ տարածքով, թե՞ կենտրոնացրել եք մեկ վայրում,
- ունե՞ք մետաղորոշիչ դարպաս,
- ունե՞ք ռենտգեն սարքավորում,
- արդյոք ունե՞ք ամենօրյա զննում արտաքին և ներքին տարածքներում կասկածելի առարկաների, մեքենաների և այլնի հայտնաբերման նպատակով,

- պատուհանները երեսպատված են 350 միկրոն պլաստիկ թաղանթով:

# ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՌՈՒՄԲԻ ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Սերջիո Բերկովիչի (Իսրայել)

Վիլեմ Հեբման (Նիդերլանդներ)

## Ներածական

Պատերազմն ու թանգարանները չափազանց հակասական հասկացություններ են: Պատերազմը մի իրավիճակ է, երբ մարդիկ ուղղակի կամ անուղղակիորեն սպանվում, վիավորվում կամ վնասվում են: Իսկ թանգարանները միտված են պատմության ընթացքում մարդկանց նվաճումների պահպանմանը և պաշտպանությանը՝ հանուն կրթության, մշակույթի և ժառանգության:

## Պարադոքսը խուսափելու երեք դեպքերի ուսումնասիրություն

Իրաքի ազգային թանգարանը հիմնադրել է բրիտանացի Գերթրուդ Բելը 1926թ.: Ի սկզբանե այն հայտնի էր որպես Բաղդադի հնագիտական թանգարան: 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ՝ թանգարանը փակվեց ԱՄՆ-ի հետագա ավիահարվածներից խուսափելու նպատակով և վերաբացվեց միայն 2000 թ. ապրիլի 28-ին:

2003թ. Իրաքի պատերազմին նախորդող ամիսներին, դեկտեմբերից սկսած և հունվարից, հնություններով զբաղվող տարբեր մասնագետները Պենտագոնին և Մեծ Բրիտանիայի կառավարությանը խնդրել են ապահովել թանգարանի անվտանգությունն ինչպես մարտական գործողություններից, այնպես էլ՝ թալանից: Չնայած խոստումներ չէին տրվել, սակայն ԱՄՆ-ի ուժերը խուսափեցին ուրակոծել թանգարանը: 2003թ. ապրիլի 8-ին վերջին աշխատակիցները ևս լքեցին թանգարանը: Խախտելով Ժնևի կոնվենցիան, իրաքյան ուժերը, ԱՄՆ-ի զինուժը ինչպես նաև հարակից տարածքներից Հանրապետական հատուկ



պահակախումբը՝ գրավեցին թանգարանը: Ավելի ուշ շենքում հայտնաբերվել են բանակի համազգեստներ:

Իրաքյան ուժերը շրջանի արևմտյան կողմի երկայնքով ամրացված պատ էին կազմել՝ թաքնված տեղաշարժ թույլ տալով թանգարանի առջևի և հետևի հատվածի միջով: Թալանը տեղի էր ունեցել ապրիլի 10- 12-ն ընկած ժամանակահատվածում, երբ աշխատակիցների մի մասը վերադարձել էր շենք և կանխել թալանչիների թանգարան մուտք գործելու հետագա փորձերը մինչև ապրիլի 16-ը՝ ԱՄՆ-ի ուժերի ժամանումը: Մինչ անձնակազմը գողությունը և վնասը կանխելու համար պահեստավորման ծրագիրը էր նախաձեռնել (Իրան – իրաքյան պատերազմի և Պարսից ծոցի երկրորդ պատերազմի ժամանակ)՝ շատ ավելի խոշոր արձաններ, ստելլաներ և ֆրիզներ էին մնացել ցուցասրահներում՝ փրփուրով պաշտպանված և ավազի պարկերով շրջապատված: Այս պատկերասրահներից քառասուն ցուցանմուշ գողացվեց՝ հիմնականում առավել արժեքավորները: Բացի այդ, թալանվել էին նաև թանգարանի վերգետնյա պահոցները. արտաքին պողպատե դռների վրա բռնությամբ մուտք գործելու նշաններ չկային:

Շուրջ 3100 պեղածո արժեքներ (սափորներ, անոթներ, խեցեղենի բեկորներ և այլն) գողացել էին, որից վերականգնվել է ավելի քան 3000-ը: Թալանողները, կարծես, խտրականություն չեն դրել գողոնի միջև, օրինակ, կրկնօրինակների մի ամբողջ ցուցափեղկ թալանել էին, մինչդեռ հարակից առավել արժեքավոր նյութերով ցուցափեղկին չէին էլ դիպչել:

Երրորդ թալանն իրականացվել էր ստորգետնյա ֆոնդապահոցներում, որից ակնհայտ էր, թե գործն արվել էր ներսից: Ակնհայտ էր, որ գողերը պահարանների բանալիներն ունեին, բայց մթության մեջ վայր էին գցել: Նշված գողոնի շուրջ 2500 օրինակ հնարավոր եղավ վերադարձնել:

## **Մերձավոր Արևելք, 2016 թ.**

2006թ. ամռանը բռնկվեց Մերձավոր Արևելքի պատերազմը՝ հսկայական վնասներ պատճառելով: 2006թ. հուլիսի 13-ին, ժամը 20: 00-ին, առաջին հրթիռը խոցեց Կարմել լեռը: Կարմելիտի վանքը գտնվում էր լեռնաշղթայից 30 մ հեռավորության վրա: Այդ պահից սկսած՝ մեկ ամիս շարունակ, Հայֆան հրթիռակոծվեց: Հրթիռներն ընկնում էին Ազգային ծովային թանգարանի տարածքում, որտեղ տեղակայված են Հայֆայի արվեստի, Մանե Կաց և Ճապոնական արվեստի թանգարանները: Վերջին հրթիռն ընկել էր Քաղաքի թանգարանի հարևանությամբ, որի բեկորները վնասել էին թանգարանի շենքի հատակը և պատերը:

## **Թալան և ավերածություններ Քարուլի թանգարանում**

1993թ. մայիսին հրթիռները մխրձվեցին Քարուլում գործող Աֆղանստանի ազգային թանգարան: Կրակի հետևանքով գահավիժեց թաղածածկ տանիքը, բեկելով ներքև՝ վերին պատկերասրահների վրա: Հաջորդ օրը 37-ամյա թանգարանի համադրող Նաջիբուլլա Պոպուլը, հեծանիվով ճողոպրելով կրակի միջով, հասավ թանգարանի ավերված շենք: Նա, մի քանի աշխատակիցների հետ միասին, կարողացավ փրկել հավաքածուի մի մասը՝

տեղափոխելով ստորգետնյա պահոցներ: Սակայն թանգարանի շենքի և հավաքածուի մյուս մասի ոչնչացումը՝ ավելի մեծ ողբերգության միայն առաջին փուլն էր: Հաջորդ ամիսներին մոջահեդական զինվորների հոսքը բազմիցս ներթափանցել է թանգարանի տարածք և համակարգված կերպով թալանել պարունակությունը՝ հաճախ առաջնորդվելով Աֆղանստանի և Պակիստանի հնաժամ իրերի վաճառքով զբաղվող վաճառականների հստակ ցուցումներով:

Իսկ երբ 1994թ. հունվարին Միավորված ազգերի Հաբիտատ գործակալությունն աղյուսապատեց թանգարանի պատուհանները և վերանորոգեց դռները և կողպեքները փոխարինվեցին նորերով՝ դա միայն խթանեց թալանչիների ներխուժումը և 1995 մարտին, զինվորները պարզապես կրակեցին դրանց վրա:

Քարուլի ազգային թանգարանը հրդեհվել էր 1993 թ. մայիսին՝ հրթիռային հարձակումներից: Թանգարանի երկրորդ հարկն ամբողջովին դատարկվել էր: Բացառություն էին կազմել սակավաթիվ արտեֆակտները, որոնք օգտագործվել էին ցուցահանդեսների համար:

### **Ընդհանուր առմամբ**

Այս գլխում կներկայացնեմ իմ փորձառություններից մի քանիսը: Այդ թվում՝ թանգարանների նախապատրաստումն ու գործողությունները, որոնք իրականացվել են ողջ Իսրայելի և մասնավորապես Հայֆայի տարածքներում գտնվող թանգարաններում՝ ցուցանմուշների հնարավոր վնասները կանխելու համար: Այդ ամենն իրականացվում էր քաղաքի անընդհատ հրթիռակոծման պայմաններում:

### **Ընդհանուր ցուցումներ.**

- Ռումբի կամ հրթիռային հարվածների դեպքում՝ թանգարանի այցելուներն ու անձնակազմը պետք է հետևեն զինված ուժերի հրահանգներին :
- Անվտանգության աշխատակիցները պետք է ունենան անվտանգ ապաստարան:
- Համոզվեք, որ կրակմարիչները աշխատանքային վիճակում են և հասանելի:
- Համոզվեք, որ տարհանման ուղիները և ելքերն առանց խոչընդոտների են:
- Համոզվեք, որ կապի բոլոր միջոցները հաղորդակցության համար ակտիվ և անվտանգ վիճակում են՝ թանգարանի անձնակազմի և անվտանգության աշխատակիցների հետ կապն ապահովելու համար:
- Համոզվեք, որ թանգարանի գույքամատյանի պատճենը, ինչպես նաև կրկնօրինակ ցուցանմուշների ցանկը թանգարանից դուրս, անվտանգ տեղում ի պահ են դրված (օրինակ՝ բանկում, Մշակույթի նախարարությունում, և այլուր)
- Հնարավորինս նվազեցրեք էլեկտրաէներգիայի և գազային սարքերի օգտագործումը: Օգտագործելու դեպքում համոզվեք, որ բոլոր փականները փակված և անջատված են:

- Բոլոր դյուրավատ նյութերը պետք է դուրս բերվեն թանգարանից և նրա շրջակայքից:
- Տեղակայեք ջրի հիմնական փականները և նշեք դրանք քարտեզների և փողոցների վրա:
- Պայթյունի դեպքում ապակու բեկորների տարածումը կանխելու համար՝ բոլոր պատուհանների ապակիները պատեք մինչև 350 միկրոն հաստությամբ թափանցիկ թաղանթով:
- Համոզվեք, որ առաջին օգնության տուփը պարունակում է բոլոր անհրաժեշտ սարքավորումները:

### **Ռազմական դրության նախապատրաստություն**

Բոլոր թանգարանները պարտավոր են ունենալ արտակարգ իրավիճակների պլան, որի հիմնական կետերն են.

- բոլոր ցուցանմուշները պետք է ունենան ամբողջական փաստաթղթեր,
- կազմակերպում, կանոնակարգեր և պարտականությունների բաժանում,
- ցուցանմուշների համար նախապես պատրաստված անվտանգ վայր,
- թանգարանի պաշտպանական համակարգի բարելավում. ցնցող ալիքի դեպքում՝ ապակու ցրման կանխարգելում,
- թանգարանների կատալոգները և փաստաթղթերը պահել թանգարանից դուրս՝ անվտանգ վայրում,
- Ցանկացած ցուցանմուշ, որը քաշի կամ չափի պատճառով հնարավոր չէ տեղափոխել՝ պաշտպանությունը կազմակերպել տեղում,
- պատրաստել անվտանգության ընկերությունների ցուցակ, դրանց հետ կնքել պայմանագրեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում արձագանքեն,
- պատրաստել ռազմական պաշտոնյաների, ոստիկանության, հրշեջ ծառայության, փրկարարների և, իհարկե, թանգարանի անձնակազմի ցանկը՝ կոնտակտային տվյալներով,
- նախապատրաստել կամավորների ցանկ,
- վերապատրաստել և փորձարկել մարդկանց և ցուցանմուշների տարհանումն ապահով վայրեր,
- նոր թանգարանների կառուցման ժամանակ ապահովել հակահրթիռային անվտանգությունը,
- պաշտպանություն կազմակերպել՝ հարվածի դեպքում թանգարանի թալանը կանխելու համար
- ամենօրյա ռեժիմի վերադառնալու համար կարգավորումներ նախապատրաստել:

### **Առաջարկություններ ցուցահանդեսների և հավաքածուների համար**

- Բոլոր այն ցուցանմուշները, որոնք կարող են վնասվել պայթյուններից, պետք է հանվեն ցուցասրահներից, փաթեթավորվեն և պահվեն անվտանգ վայրում:

- Պատուհանների մոտ գտնվող բոլոր իրերը հեռացրեք և պահեք անվտանգ տեղում:
- Ղեկավարության նախապատրաստած պլանի համաձայն՝ հեռացրեք և անվտանգ վայրում պահեք բոլոր արժեքավոր ցուցանմուշները: Մարդկանց համար անվտանգ վայրը կարող է համարվել անվտանգ նաև ցուցանմուշների համար:
- Ստորգետնյա ապաստարաններում թանգարանային իրերի պահպանումը պահանջում է, որ դրանք գտնվեն դարակաշարերին, գետնի մակարդակից առնվազն 15 սմ բարձրության վրա: Այնպայման համոզվեք, որ գործում է տարածքի ջրահեռացումը և այնտեղ չոր է:

**Թանգարանային առարկաների ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի հետևյալ պայմաններում.**

- ողջամիտ ֆիզիկական պաշտպանություն ունի կամ հրթիռային հարձակումներից և գողությունից,
- առանց ջրի, ջրահեռացման կամ կեղտաջրերի խողովակների,
- առանց դյուրավառ, պայթուցիկ, թթվածնային կամ քայքայիչ նյութերի,
- առանց կենսաբանական սպառնալիքի,
- առավելագույն ջերմաստիճանը 24° C և հարաբերական խոնավությունը, չգերազանցի 65% -ը,
- ապահով կողպեքային համակարգ (առաջարկում ենք կողպեքը փոխել), նոր կողպեքի տվյալ փականը պետք է նշվի գաղտնի նշանով,
- սահմանել զինված պահապանի հերթապահություն, որն ունենա կապի միջոցներ ու սարքեր:

**Թաղանի կանխարգելում**

- օգնության կանչեք ոստիկանությանը կամ բանակին,
- պատրաստել անվտանգության ընկերությունների ցուցակ,
- մոբիլիզացնել թանգարանի աշխատակիցներին՝ ավերակների տակ թանգարանային ցուցանմուշները որոնելու համար,
- փակել թանգարանի տարածքը բոլոր չարտոնված անձանց համար:
- պահակախումբը տեղակայել դրսի կողմից:
- ավերակների տարածք մուտքը պետք է հաստատվի միայն զինված ուժերի և ինժեներական մարմիններ կողմից:

# ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ռոբ դեն Ռույջեն (Նիդերլանդներ)

Ուիլյամ Հեքման (Նիդերլանդներ)

Մայքլ Ջոն (Գերմանիա)

**Ի՞նչ անել, եթե թանգարանի շինության հետ կապված խնդիրներ կան**

## *Ներածություն*

Քանի որ այս կառույցում պահվում են թանգարանի կարևորագույն հավաքածուները՝ արտակարգ իրավիճակների կամ աղետների դեպքում պետք է դրանք դիտարկել պահպանման խիստ անհրաժեշտություն ունեցող առաջնային օբյեկտների շարքում: Իսկ եթե շինությունը վատ է կառուցված կամ ըստ հարկի չի պահպանվում՝ ապա արտակարգ իրավիճակներում վիճակը կարող է էլ ավելի վատթարանալ: Այսպիսով, եթե կառույցի ամրության և պահպանության հետ կապված խնդիրներ կան՝ այն կարող է փորձանք դառնալ հավաքածուի կամ կազմակերպության համար:

## *Ասբեստ՝ Ամստերդամի Ռեյկսմյուզեում*

2003 թ. Ամստերդամի Ռեյկսմյուզեումը, որը Նիդերլանդների ամենահայտնի թանգարաններից է և տարեկան ավելի քան մեկ միլիոն այցելու է ընդունում՝ ստիպված էին փակել անորոշ ժամանակով, քանի որ հերթական ստուգման ժամանակ կառույցում ասբեստ էր հայտնաբերվել: Պաշտոնատար անձինք հարկադրված էին փակել թանգարանը, որտեղ ներկայացվում էր հոլանդական արվեստի ամենամեծ հավաքածուն, այդ թվում՝ Ռեմբրանդի «Գիշերային դետքը»: Որպես նախազգուշական միջոցառում՝ թանգարանը փակ էր նաև աշխատակազմի 400 անդամի համար: Միայն երկու շաբաթ անց, կառույցի մի փոքր հատված, ապահովվեց ու վերաբացվեց:

## ***Բլանդինգի թանգարան***

Ջրի խողովակների պայթյունից վնասված Բլանդինգի թանգարանը հարկադրաբար փակվեց 2004 թ. նոյեմբերին: Երեքշաբթի օրը, կեսօրին, ԱՄՆ-ի Յուտա նահանգի Բլանդինգ քաղաքում, վնասված ջրատարի պատճառով հեղեղվել էր Սեդարսի պետական զբոսայգի-թանգարանը, որի պատճառով պաշտոնյաները հարկադրված էին այն փակել առնվազն երեք ամսով: Խոսնակը տեղեկացրեց, որ թեև երկու շաբաթ առաջ համակարգի ստուգման ժամանակ ոչ մի խնդիր չէր հայտնաբերվել, սակայն դեռևս 25 տարի առաջ թանգարանի հրդեհաշիջման համակարգում խողովակների միացման հանգույցն ըստ հարկի չէր ամրացվել: Խողովակի այդ հանգույցի պայթյունից դուրս մղված ջրի տարափը վնասել էր առաջին և երկրորդ հարկի պատերը, հատակը և ցուցափեղկերը: 15 բույսեր ընթացքում, մոտ 18,000 գալոն ջուր (68,000 լիտր, կամ 68 տոննա) էր հեռացվել: Գրեթե այդքան պահանջվեց աշխատակիցներից համակարգի հիմնական ջրի փականը կողպելու համար:

## ***Ալբերտինա թանգարանը Վիեննայում***

2009 թ. հունիսին Վիեննայում, վերջին 50 տրավա ընթացքում Ավստրիայի ամենաաղետալի ջրհեղեղի պատճառով, վնասվեցին Ալբերտինա թանգարանի ստորգետնյա պահեստները: Աշխատակազմը հեղեղված պահեստից հանեց 950,000 արվեստի գործ և տեղափոխեց Ավստրիայի մեկ այլ վայր:

### ***Վտանգներ***

- Էլեկտրալարերը չեն համապատասխանում չափանիշներին,
- վթարային գեներատորը կամ էլեկտրահեղեղի պահեստային համակարգերը մատչելի չեն,
- հրշեջ ծառայության անձնակազմն ադապտացված չէ կառույցին,
- անբավարար է գործում հրդեհի, ծխի, կամ ջրի հայտաբերման համակարգը,
- անսարքություններ կան ջերմության կարգավորման, հովացման, ջեռուցման և այլ համակարգերում,
- բացակայում են կառույցի և կառուցվածքի գծագրերը,
- անբավարար է տեխնիկական սպասարկման բյուջեն,
- գործում է միայն ջրի և էլեկտրականության մատակարարման մեկ համակարգ,
- անբավարար է կառույցում առկա ասբեստի մեկուսացումը,

- անբավարար է կառույցի կառավարման համակարգը,
- կառույցի հիմքերի հետ կապված խնդիրներ կան,
- տեխնիկական անձնակազմը վարձակալմամբ է սպասարկում իրականացնում,
- ապահովված չեն SS համակարգն ու ծրագրակազմը,
- բարվոք վիճակում չեն ջրի և գազի խողովակները:

### ***Մտուգաթերթիկ (կանխարգելիչ)***

- Ամրացված են աստիճաններն ու բազրիքները,
- արտակարգ իրավիճակների համար փորձարկված է պահուստային լուսավորությունը և մատչելի է ողջ կառույցին,
- թանգարանն ամբողջովին սպասարկվում է տեղի կոմունալ ծառայության կողմից,
- թանգարանն ունի կրկնակի, կամ հավելյալ էլեկտրալարեր,
- սանտեխնիկայի և էլեկտրամատակարարման աշխատանքները սարքին են և գործում են սպասարկման պայմանագրերը,
- թանգարանում առկա է ասբեստի վտանգ,
- էլեկտրական միացումները և տուփերը համապատասխանում են չափանիշներին,
- տեխնիկական անձնակազմը մատչելի է,
- առկա են ջերմային կարգավորման համակարգերը, գործում են սպասարկման պայմանագրերը,
- SS համակարգերը լավ պաշտպանված են,
- հրշեջ ծառայության անձնակազմը համապատասխանում է կառույցի պահանջներին,
- առկա են կառույցի և կառուցվածքի գծագրերը,
- արտակարգ իրավիճակների սխեման կառույցի բաղադրիչներից է,
- առկա է հատակների բեռնվածության վիճակագրությունը,
- ցուցահանդեսների դահլիճներում գեղանկարչական աշխատանքների համար կիրառվող ծալովի վերելակները համապատասխանում են հատակների բեռնվածության չափանիշին,
- անձրևաջրերի ջրատար խողովակները մաքուր են և անջրանցիկ և ջրահեռացման համար բավար ունեն հզորություն,
- տանիքները կարող են կրել ձյան ծանրությունը,
- տեղադրված կայծակի հաղորդիչներն արդյունավետ են գործում:

### **Հրահանգներ (միջոցառման ընթացքում)**

Արտակարգ իրավիճակների դեպքում կիրառվող տիպային ընթացակարգ

- տեխնիկական արտակարգ իրավիճակ

- կառավարման սենյակ
  - տեղեկացնել կառավարչին,
  - տեղեկացնել անվտանգության ղեկավարին,
  - տեղեկացնել շենքի անձնակազմին:
  
- Որոշման կայացում
  - նեցուկ կանգնել հավաքածուի անձնակազմին,
  - նեցուկ կանգնել անվտանգության աշխատակիցներին,
  - տարհանել մարդկանց և արվեստի գործերը,
  - տեղեկացնել հրշեջ ծառայությանն ու ոստիկանությանը,
  - հասանելի են զսպման միջոցառումները,
  - մաքրված են թափոնները,
  - նշված են վտանգի գոտիները,
  - առաջնահերթ է վերականգնման գրաֆիկը:



Developed by members of the ICMS ICOM International Committee of Museum Security with the financial support of:

ICOM

Ministry of Culture of The Netherlands

Rijksmuseum Amsterdam (The Netherlands)

Gogh Museum (The Netherlands)

Mondriaan Foundation (The Netherlands) ICMS

Editor: Willem Hekman (The Netherlands) October 2010

Translated into Armenia with the support of ROCHEMP Regional Center of Cultural Heritage Management, Protection and Enhancement and ICOM National Committee of Armenian Museums

©Սույն ձեռնարը պատրաստվել է 2010 թ. ԻԿՕՄ-ի թանգարանի անվտանգության միջազգային կոմիտեի (ICOM ICMS) կողմից:

2020թ. թարգմանությունը իրականացվել է ՌՕՔԵՄՓ մշակութային ժառանգության պահպանության, կառավարման և արժևորման տարածաշրջանային կենտրոնի և ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի կողմից:

### **Թարգմանիչներ՝**

Գայանե Բաբայան

Նանար Քալանթարյան

Գոհար Հովակիմյան

Անի Ավագյան

### **Խմբագիր՝**

Հռիփսիմե Պիկիչյան

### **Բնագիր՝**

[https://icom.museum/wp-content/uploads/2018/07/ICMS\\_Handbook\\_eng.pdf](https://icom.museum/wp-content/uploads/2018/07/ICMS_Handbook_eng.pdf)